10. ԻՍՔՅԱՆԴԱՐ

Կէղնի, չէղնի թագավոր մի կէղնի, ուրին իրեք հատ տղա։ Թագավորի բաղի մեջ իրեք հատ ծառ կա. էդ իրեք ծառ լէ ամե մեկ խնձոր կբռնե։ Էդ խնձորներ կհասնին։ Օր չէրթան ծառեր պահին, յոթ գլխեն դև գիգա զխնձոր կտանի։

Թագավոր կելնա հ'առճի օր զուր ճոչ տղեն կճամբե։ Տղեն է օր կէրթա, յոթն գլխեն դև օր գիգա, ծառի խեչ, տղեն կվախենա. գիգա։ Դև կզարկե, ընտրա ծառի խնձոր կտանե։

Թագավոր օլոր օր ուր միչնեկ տղեն կճամբե, միչնեկ տղեն լէ կէրթա, էն լէ կվախենա։ Գիգա դև էլման կզարկե, միչնեկ տղի ծառի խնձոր լէ կտանե։ Գիգա պզտիկ տղի դյոր, կմնա պզտիկ տղու խնձոր։ Թագավոր լէ կխանչե զուր տղեն, կրսե.

— Իսքյանդար, էսօր քու դյորն է։

Իսքյանդար կէրթա, կիշեր կմնա ծառի խեչ, կտեսնա օր հանգե յոթ գլխեն դև էկավ, չէ՞ քաչ կէղնի չվախենա ինք, կհասնի, թուր կթալե, դևի անգնչներ զմեն կփորկտե, գըլնա ուր չեոր։ Գընգնա գևու ետև, կէրթա վրր դևու ծրկուն, զտեխն է կնչնա ու գիգա։

Թագավոր կհարցու.— Քու ծառի խնձոր տարա՞վ։

Կրսե.— Չէ,— կհանե զանգնչներ կցուցու թագավորին։

Թագավոր լէ գելնա տղի էրես կպաքե։ Մեծ ախպրտանք ընգրրնե կպատռին։

Իսքյանդար կառնե զուր էրկու մեծ ախպեր ու կէրթա վրր դևու ծրկուն։ Հ'առեճի հաղ զմեծ ախպեր կմտու մեջ ծկուն։ Մեծ ախպեր կմտու հրի ծկու կես, կրսե.

— Ցամա՜ն, ընձի քաշեք հանեք, ես խեղթա։

Կքաշին, կհանին դուրս։ Դյոը դիգա միջնեկ ախպոր՝ Միջնեկ ախպեր լէ կըսե.

— Ցամա՜ն, ընձի քաշեք, ես խեղթա։ —Էն լէ կհանին դուրս։ Դյոր դիգա Իսքյանդարին։ Էդ Իսքյանդար ուր ախպրտոց կըսե.

—Ես օր կմտնամ մըջ ծկուն, քենի օր կըսիմ՝ «Ցամա՜ն, ես խեղթա», դուք իջուցեք։

Էդ ծակ լէ, քառսուն գազանկան ծակ է։ Իսքյանդար գիշնա մեջ ծկուն։ Կտեսնա օր հանդե իրեք խուռնիկ-խրեղեն կնիկ նստուկ ին, դև լէ ըրինդար քնուկ է։

Կնկտիք կվերցուն, էդ տղին կըսին.— Տղա, խավքն ուր թեռվ. օձն ուր պորտով իդա տեխ չի գա, դու իմա՞լ իս էկի, հ'ելի ծկեն, սկա դև օր էլավ, մեծ կտոր անդանջ կթորկի, համա կփոքկտե։

Կնկտիք օր հըմալ կըսին, տղեն կառնի թուր ծեռ, կզարկե դևի՝ յոթն գլուխ լէ կկտրի, զդև կսպանե, կմնա իրեք կնիկ։

Կնկտոց կըսե։— Ինա մեծ կնիկ թըխ էղնի մեծ ախպոր։

Էնիկ կթալին թել կքաշին, կհանին։ Գիգա միջնեկ ախպոր դյոր, կքաշե միջնեկ կնիկ լէ գիտա միջնեկ ախպոր։ Գիգա դյոր՝ պզտիկ կնկան։ Կրսե. «Պզտիկ կնիկ լէ ընձի»։ Կմնան պզտիկ կընիկ ու պզտիկ ախպեր մըջ ծկուն։ Պզտիկ կնիկ լէ շատ խորոտ կէղնի, կվերցու կնիկ էդ տղին կրսե.

— Հ'առճի հաղ դու հ'ելի։

Էն լէ կրսե.— Չէ՜, դու հ'ելի, նոր ես գելնամ։

Կնիկ լէ կըսե.— Ես խորոտ իմ, հ'ելնամ քու ախպրտանք կըպատռին, քըզի կթորկին մեջ ծկուն։ — Կնիկ կըսե թը.— Ես օր՝ հ'ելա, օր քըզի չհանեցին, քըզի թալ վըր Սև խոչուն, Սև խոչ լէ զինք կթալե վըր Կարմիր խոչուն, Կարմիր խոչ լէ զինք կթալե վըր Սիվտակ խոչին, Սիվտակ լէ քըզի ծըկուց կհանե լուս աշխարհք։

Էղման օր կըսե, կնիկ կքաշին կհանին։ Էդ տղեն կմնա մըջ ծըկուն։ Ախպրտանք լէ կառնին զիրեք կնիկ ու կէրթան։

Տղեն լէ էլ չֆահմի զինք թալի հ'առճի հաղ վըր Սև խոչին; զինք կթալե վըր Սիվտակ խոչուն, Սիվտակ խոչ լէ զինք կթալե վըր Կարմիր խոչուն, Կարմիր խոչ լէ զինք կթալե վըր Սև խոչուն, Սև խոչ լէ գինք կթալե մութ աշխարք։

Տղեն կէրթա մութ աշխարք։ Կծարվնա, կէրթա պառվու մը տուն ռաստ գիգա։

Կըսե.— Պառավ, փըշը մը ճուր տու խմիմ։

Ճուր չէղնի, կէրթա կշռե, կբերի գիտա, տղեն կխմե, կըսե.— Ախ, պառավ, էդի ի՞նչ շոռ ու տաք է։

Կրսե.— Ա՜խ, լաո՛, մեր էրկիր ճուր չկա, օրեն ախչիկ մի պտի տանին տան առուծին, էդ առուծ զախչիկ ուտե, նոր ճուր իտա քաղաք, խմինք։ Կրսե.— Էսօր թագավորի ախչկա դյորն է։

Կրսե.— Պառա՛վ, հ՝ելի զծեր ախպուր ընծի ցուց տու։

Պառավ լէ գելնա կառնե զտղեն, կէրթա։ Կէրթա ախպրի խեչ, տեսնա հանդե քաղաք քաղքով թափած, թագավորի ախչիկ բերած, օր թը առուծ հ՝ելնա ախպրի մեջեն, զախչիկն ուտե, նորեն ճուր փրցու իգա։

Տղեն օր տեսնա առուծ բրբեն հ՝ելավ, կզարկե թուր, առուծի գլոխ կկտրե, զառուծ կէնե փրրթու փշուր, դորեսի ճուր կփրթնա, քաղաք քաղքով կթափին ու կխմին ճուր։

Թագավոր լէ կրսե.— Ես իմ ախչիկ պիտի տամ էդա տղին։

Կտանե ուր տուն ախչիկ կփսակե վրր էդ տղին։

Իսքյանդար ժուք ու ժամանակ մի կմնա իդա տեխ։ Իսքյանդար թագավորի ախչկան կրսե.

— Ես իմա՞լ էնիմ, օր զիսի թալիմ լուս աշխարք։

Ախչիկ լէ, կվերցու տղին կրսե.— Հանդե իմ պապու բաղի մեջ ծառ մի կա, էդ ծառի վրեն արծիվ բուն է դրե, ընի տարին ամիս ձագ կհանե, հանդե ծառի տակ օձ մի կա, գելնա զառծվու ձրգեր կուտե։ Օր գացիր էնտեխ, հանդե օր օձ գելնա ծառն ի վեր, գելնա օր թը ձրգերն ուտե, դու կզարկիս օձ կսպանիս, ու կնստիս էն ծառի տակ հրրի արծիվն իգա։ Արծիվն օր թե էկավ, հանդ ճվման գիչնա վրր քրզի օր զարկի զքրզի։ Ընդրա ձրգեր լէ զուրանք դիտան ուրանց մամու դեմ, չթորկին զարկի զքրզի։ Ձրգեր կրսին էդ հաղ՝ «Հա, մարե ջան, օձն հ՝ելավ զմրզի կուտեր, էդի զարկեց օձն սպանեց». էն դախ արծիվ քրզի, կրսե՝ «Ուզե տամ, դու իմ ձրգեր օձուց ազատեցիր», դու լէ ըսե՝ «Քենե բան մը չըմ ուզի, զիսի թալ լուս աշխարք»։

Էդ թագավորի ախչիկ օր էդման թարիֆ կէնե, տղեն գելնա կէրթա կնստի ծառի խեչ։ Կտեսնա օր հանդե ահագին օձ մե, հ՝ելավ ծառն ու վեր օր թը ձգերն ուտե, ձրգերն վժվժացին, տղեն հասավ զթուր թալեց, զօձն փրթեց, ազատեց զձգեր։

Տղեն կնստի ծառի տակ։ Կտեսնա օր հանդե արծիվ էնդհուց խրժման էկավ իջավ վրր տղին օր թը զարկեր տղին։ Ձրգեր հ՝ելան զուրանք տվին մամու դեմ, ըսին.

— Մարե ջան, զմրզի օձուց ազատեց։

Մամ լէ վերցուց ըսեց ձրգերուն. ձրզի իմա՞լ ազատեց։

Ըսեցին.— Օձն օր հ՝ելավ օր զրմրզի ուտեր, զարկեց, օձ փրրթեց։

Արծիվ վերցուց տղին ըսեց.— Ուզե, ես իտամ քըզի։

Տղեն լէ կվերցու կրսե.— Ես քենե բան մը չըմ ուզի, զիսի թալ լուս աշխարք։

Կրսե.— Վա՜յ, քու սովրցողի վիզ կոտրի, ըդի քըզի ո՞ն է էդ-ման սովրցուցե։ — Կրսե,— դե, արի հ'ելի վըր իմ պառեկին։

Տղեն կհանե վըր ուր պառեկին, ու կթռնա կփանցրնա։ Կհա-նե ու կհանե, հանե ու կհանե ու կհարցու.

— Աշխարք ի՞նչ խըդար մնաց։

Կրսե.— Էղավ քընց կալ մե։

Էլման կփանցրնա, կփանցրնա, կփանցրնա, կրսե.

— Աշխարք ի՞նչ խըդար մնաց։

Կրսե.— Աշխարհք էղավ քընց մազ մե։

Էլման կփանցրնա, կհարցու.— Ի՞նչ խըդար մնաց։

Կրսե.— Էղավ քընց հավկիթ մի։

Սահաթվան չափ լէ կթռնի, տղեն կհանա լուս աշխարք, ուր պապու աշխարք։

Տղեն լէ հ'ոցկի կելնա կէրթա ուր պապու տուն։ Կէրթա, կտես-նա օր հանդե, էրկու կնիկ հասե ճոչ ախպոր, պզտիկ ու մեծ կնիկ մեծ ախպերն առեր, միշնեկ կնիկ լէ հասե միշնեկ ախպոր։

Իսքյանդար կքշե, կէրթա թագավորի դիվան, իմալ օր ես քըզի ըսի, էն լէ ուր գլխու գալած էլման թագավորին խսա կէնե։

Թագավորն լէ կխանչե զուր էրկու տղեն ու ջալադ, զէրկու տղի գլոխ լէ կզարկե։ Իրեք կնիկ լէ կհասնի Իսքյանդարին։ Թաժա էն-տեխ զիրեք կնիկ լէ կառնի ուրին ու կփսակվի։

Ուրանք հասան ուրանց մուրազին, մենք լէ հասնինք մեր մու-ռազին։ Երկնուց իրեք խնձոր պատավ, մեկ ընձի, մեկ քըզի, մեկ լէ ջամաթին։